

ՃԱՆԱԶՈՒՄԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՓՈՐՁ

Հայոց ցեղասպանության փաստը պաշտօնապես ճանաչող Իսրայելի կառավարության միաձայն որոշումն ենք, աշխուժացած են քննյալի մեջ մշակող որոշումին վաերացումը կանխելու փորձերը: Արաբական հրեական երեք համայնքներում ղեկավարները դիմած են իսրայելեան խորհրդարանի երեսփոխաններին, պահանջելով չգորակցիլ Ցեղասպանության ճանաչումին: Փաստաթուղթին մեջ կրկնված է թրքական թեզը, թե պատմական նման զգայուն հարցեր պետք է արծարծուին միայն գիտական մակարդակի վրայ, զերծ մնալով քաղաքականացումը:

ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԻՒՆԸ՝ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹԻՒՆ

Անցնող օրերում լիբանանեան գանազան շրջաններում մեջ հրահրուած խուլիկանությունները լոյսին տակ, հանրապետության նախագահ Ժոզեֆ Աուն Պապատայի պալատին մեջ ընդունեց ներքին գործերու նախարար Ահմատ Հաժ-ժարը, որուն հետ քննարկեց երկրին ապահովական ընդհանուր վիճակը եւ ներլիբանանեան խնդիրները զերծ մնալու կարելուութիւնը: Նախագահն ու նախարարը շեշտեցին, որ ներքին անվտանգութեան պահպանումը կը



համարուի առաջնահերթութիւն, աւելցնելով որ պետութիւնն ու ապահովական ուժերը կը կատարեն իրեն պարտականութիւնը: Պատուիրակութիւններ ընդունած ատեն նախագահը ժխտեց բանակի հրամանատարն ու ապահովական կառույցներուն պետերը պաշտօնագրկելու մտադրութեան մասին տարածուած անհիմն լուրերը: Ան որուատեց նաեւ խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի խռովութիւններ մերժող կեցուածքը:

ԱԶԱՏ ՏԵՐԱՇԱՐԺԻ ԽԱՓԱՆՈՒՄ

Իսրայելեան ուժերը երէկ եւս շարք մը յարձակումներ գործեցին հարաւային շրջաններու ուղղութեամբ: Առողջապահութեան նախարարութիւնը յայտարարեց, թէ Լիբանանի մէջ 2 Սարտին բռնկած պատերազմին ընթացքին ցարդ մահացած է 4297 հոգի, վիրաւորուած՝ 12.200 մարդ: Ինչ կը վերաբերի տեղահանուածներու թիւերուն, ապա զինադադարի յայտարարութենէն ետք Պեյրութի մէջ անոնց թիւը 13 հազար ընտանիքէ նուազած է 4814 ընտանիքի, ուստի ժամանակաւոր կացարաններուն թիւն ալ 135-էն նուազած է 89-ի: Հետեւաբար, Պեյրութի քաղաքապետութիւնը մարաքաղաքի ծովեզերեայ հատուածէն վերացուց այնտեղ լարուած վրանները:



ԵՐԵՎԱՆԻ Ի ԻՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ ԱՏԱԳԱՆՔԵՑ, թէ հարաւի մէջ կը դիմագրաւեն ազատ տեղաշարժի խափանում՝ ներառելով ճամբաներու փակում, փլուզուած կառույցներ, անցարգելներ եւ այլ խոչընդոտներ: Իսրայելի վարչապետ Պեհիամին Նեթանիախուն յայտնեց, որ իրենք Լիբանանէն պիտի չքաշուին, մինչեւ սպառնալիքներու ամբողջական չեզոքացումը, իսկ պաշտպանութեան նախարարը շեշտեց, որ անձամկէտ պիտի մնան Կազայի, Լիբանանի եւ Սուրիոյ հողերուն վրայ իրենց հաստատած ապահովական գոտիին մէջ:

ԻՐԱՆԻ ՀԱՐՅՈՎ ՀԱՍԱԶԱՅՆՈՒԹԵԱՆ ՀՆԱՐԱՒՈՐՈՒԹԻՒՆ



Միացեալ Նահանգներու Ապիտակ տունը յայտարարեց, թէ նախագահ Տոնըլտ Թրամփի Իրանի հարցով կը նախընտրէ դիւանագիտական լուծումները եւ կը հաստատ, որ երկու կողմերը ունին համաձայնութեան յանգելու իսկական հնարաւորութիւն: Փոխնախագահ Ճէյ Տի Վենս յայտնեց, որ Իրանի հետ բանակցութիւնները ունին դրական ընթացք, աւելցնելով որ Ուաշինկթըն որոշած է բանակցութիւններուն տալ յաջողելու առաւելագոյն հնարաւորութիւն: «Եթէ Իրան փորձէ վերախառնել հիւլեակական հնարաւորութիւնները կամ թիրախաւորել նաւերը, ապա այդ պարագային պիտի փոխենք մեր բոլոր հաշիւները», զգուշացուց Վենս: Բանակցութիւններուն կը մասնակցի նաեւ քաղաքական կողմը: Զարթոյր իշխանը ամերիկացի պատուիրակներուն հետ գրուցած ատեն շեշտեց Լիբանանի մէջ եւս զինադադար հաստատելու եւ պատերազմին անյապաղ վերջ տալու անհրաժեշտութիւնը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԻ ՍՊԱՍՈՒՄ

Հայաստանի Սահմանադրական դատարանը երէկ եզրակէտ 7 քաղաքական ուժերու կողմէ Ազգային ժողովի ընտրութիւններուն արդիւնքները վիճարկելու դիմումներուն դատաքննութիւնը: Դատարանը ապա հեռացաւ խորհրդակցութիւններու սենեակ՝ որոշումներ կայացնելու համար: Դատարանին վերջնական որոշումը պետք է հրապարակուի մինչեւ 4 Յուլիսի աշխատանքային օրուան աւարտը: Յիշեցնենք, որ դատարանը կրնայ անփոփոխ պահել յանձնաժողովին յայտարարած վերջնական արդիւնքները, զանոնք համարել անվաւեր, կամ փոխել Ազգային ժողովներու աթոռներուն բաժանումը քաղաքական ուժերուն միջեւ: Եզրափակիչ կիստին իր պատասխանները տուաւ յանձնաժողովի նախագահ Վահագն Յովակիմեան, ապա մերժեց պատասխանել լրագրողներու հարցումներուն, շեշտելով որ դատարանին որոշումն ենք կը յստականայ, թէ որուն փաստարկները ճիշդ կամ սխալ էին: Անոր խօսքով, ընդդիմութիւնը եթէ շատ կրկնէ իր պնդումները, այդ չի նշանակեր, որ անոնք փաստ պիտի դառնան: Իսկ Կեդրոնական ընտրական յանձնաժողովի քարտուղար



Արմէն Սմբատեան վստահեցուց, որ յանձնաժողովին ելելուրոնային համակարգին արտաքին որեւէ միջամտութիւն անհնար է: Անոր համաձայն, ընտրութիւններուն ընթացքին արձանագրուած են որոշ խախտումներ, սակայն անոնք աննշան են ու չեն կրնար ազդել արդիւնքին վրայ: Յիշեցնելով, որ 637 ընտրատեղամասի մէջ եղած է քուէներու վերահաշուարկ, ան զարմանք յայտնեց վերջնական արդիւնքին նկատմամբ ունեց անվստահութեան համար: Ընդդիմադիր մասնակիցներէն «Միասնութեան թելեր» կուսակցութեան ներկայացուցիչ Լիպարիտ Տրմեան բողոքեց, թէ հիմնական խնդիրը կը վերաբերի ոչ թէ ընտրութիւններուն օրը, այլ նախընտրական շրջանին տեղի ունեցած խախտումներուն: Ան հարց տուաւ, թէ քանի՞ խախտում պետք է եղած ըլլար, որպէսզի յանձնաժողովը ընդունէր, թէ այդ իրապէս ազդեցութիւն ունեցած է արդիւնքներուն վրայ: Իշխող կուսակցութեան ներկայացուցիչ Սրբուհի Գալեան իր կարգին շեշտեց, որ կարելի չէ ընտրութիւններուն արդիւնքները անվաւեր համարել պարզապէս հիմնուելով ենթադրութիւններու վրայ:

ԸՆՏՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐՈՒ ՕՐԻՆԱԳԻԾ

Հայաստանի խորհրդարանական ընտրութիւններուն եւ հանրաքուէներուն այսուհետեւ քուէարկելու իրաւունք կրնան ունենալ Հայաստանի այն քաղաքացիները, որոնք ընտրութիւններէն 48 օր առաջ երկրին մէջ գտնուած են աւելի քան կէս տարի (365-էն առնուազ 183 օր): Այս հարցը երէկ քննարկուեցաւ Ազգային ժողովի Պետական-իրաւական հարցերու մնայուն յանձնաժողովի կիստին՝ ընտրական օրէնքներուն մէջ փոփոխութիւններ ներառելու քննարկումին ընթացքին: «Քաղաքացին կրնայ մասնակցիլ պետութեան համար կարելուորագոյն որոշումներ կայացնելու հոլովոյթին,

միայն եթէ անոր կենսական շահերուն կեդրոնը կը գտնուի տունեալ երկրին մէջ», ըսին բարեփոխումներուն նախաձեռնած՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան երեսփոխանները: «Պետք է ընտրական ցուցակներէն հանեց օտանամեակներով Հայաստանէն բացակայող մարդիկը», ըսին անոնք: Ներքին գործերու նախարար Արփինէ Սարգսեան ալ իր կարգին առաջարկեց, որ ընտրելու իրաւունքը վերապահուի վերջին երկու տարիներէն մէկ տարին Հայաստանի մէջ բնակած քաղաքացիներուն:

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ԿԱՆԻ ՄԵՋ

Հայաստանի արդիւնաբերողներու եւ գործարարներու միութեան պատուիրակութիւնը այցելեց Վանի առեւտրական-արդիւնաբերական պալատ: Ըստ թրքական լրատուամիջոցներուն, առ ի զօրակցութիւն հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորումին, «Անդրասիականային կապերու ամրակում» ծրագրի ծիրին մէջ հայկական պատուիրակութիւնը տեսակցած է Վանի առեւտրական-արդիւնաբերական պալատի տնօրէններու խորհուրդին, նախագահութեան եւ անդամներուն հետ: Հայկական կազմակերպութեան պատուիրակութեան մաս կազմած են անոր ղեկավարներն ու հայաստանցի գործարարներ, որոնք թրքական կողմին հետ քննարկած են կարգաւորումի հոլովոյթին դրական ազդեցութիւնը, սահմանային անցակէտերու վերաբացումին հարցը եւ այդ առումով արդիւնաբերողներու պալատին դերը: Հայաստանի արդիւնաբերողներու եւ գործարարներու միութեան փոխնախագահ Արթուր Ղազարեան յայտնեց, որ կազմակերպութիւնը երկար ժամանակէ կ'աշխատի հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորումին եւ առկայ խնդիրներու լուծումին ուղղութեամբ: «Հակառակ քննադատութիւններուն, մեր նպատակն է բարելաւել երկկողմանի յարաբերութիւնները, դիւրացնել փոխադարձ այցելութիւններն ու զարգացնել առեւտուրը», ըսաւ ան: Վանի առեւտրական-արդիւնաբերական պալատի նախագահ Նեճմետթէ Թաքուստեանը արդիւնաբերողներուն յայտնեց համագործակցելու՝ յանուն յարաբերութիւններու բարելաւումին: «Դուք ձեզ հիւր մի զգաք, այլ մարդիկ, որոնք կապուած են այս քաղաքին հետ: Մեր պալատը ձեր տունն է», հայկական պատուիրակութեան ըսաւ ան:

ՏԵՍԱՆԵԼԻ ԲԱՐԵԼԱՒՈՒՄ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտնեց, որ Պետական պահպանութեան ծառայութեան զարգացումը տեսանելի է՝ սկսեալ ծառայողական հազուատներէն մինչեւ



զեկներու եւ արդիական սարքերու ապահովումը: Պետական ապահովութեան ծառայութեան կազմաւորման տարեդարձին նուիրուած հանդիսաւոր կիստին ընթացքին վարչապետը շեշտեց, որ ներդրում կատարուած է ծառայողներու հմտութիւններու բարելաւումին ուղղութեամբ, շեշտելով այս ոլորտը թրիտասարդներուն համար գրաւիչ դարձնելու հանգամանքը:

ԱՐԾՐՈՒՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ՝ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՕՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԵՏ

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Վահագն Խաչատուրեանի հրամանագրով, Արծրուն Յովհաննիսեան նշանակուեցաւ Պաշտպանութեան նախարարութեան Ազգային հետազօտական համալսարանի պետ, իսկ Ալպերթ Պաղտատեան ազատ կացուցուեցաւ այդ պաշտօնէն: Յիշեցնենք, որ վարելով Չիլուած ուժերու բանբերի պաշտօնը, Արծրուն Յովհաննիսեան 2020-ի 44-օրեայ պատերազմին հանրայայտ դարձաւ պատերազմին ընթացքը մանրամասնող իր ամենօրեայ զեկոյցներով եւ մասնաւորաբար «Յաղթելու ենք» գրառումներով, որոնք համար աւելի ուշ ենթարկուեցաւ բուռն քննադատութեան եւ պատերազմին յաջորդած օրերէն սկսեալ համեմատաբար հեռու մնաց լրատուական լուսարձակներէն:



ՄՈՆՏԻԱԼԻՆ ԶՈՀԵՐԸ

Միացեալ Նահանգներու, Մեքսիքայի եւ Գաւառայի մէջ շարունակուող ֆուլթայի աշխարհի ախոյանութիւնը կը յատկանշուի տօնախմբութիւններով, փառատօներով եւ ուրախ հաւաքոյթներով... սակայն ոչ միայն: Մեքսիքայի կեդրոնական հատուածին մէջ, իրենց հաւաքակալին յաղթանակը տօնելու մեծ հաւաքոյթ մը վերածուած է ողբերգութեան: Այնտեղ, հազարաւոր համակիրներու




հոծ բազմութեան մէջ յառաջացած է հրմշտուր, որուն հետեւանքով մահացած է երեք մարդ: Շտապ օգնութեան ծառայողներն ու փրկարարները արագօրէն միջամտած են, սակայն չեն կրնցած փրկել 19 տարեկան պարմա-Նուհին, 44 տարեկան տղամարդն ու 48 տարեկան կինը:

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՄԵԾ ԲԱՐԵԿԱՄ, ՌՈՒՄԱՆՆԻՈՅ ԶԱԻԱԿ՝

Ն Ի Ք Ո Լ Ա Ե Ո Ր Կ Ա (1871 - 1940)

Վերջերս լրացաւ ծննդեան 155-ամեակը պատմաբան, արեւելագետ, Ռումանիոյ խորհրդարանի անդամ, վարչապետ, հրապարակագիր, հայագետ, ծանրակշիռ գիտնական, իր հայասիրութեամբ հանրածանօթ գործիչ Նիքոլայ Երկրլայի: Վստահաբար, շատեր չեն ալ լսած անոր անունն անգամ, որուն կենսագրութեան եւ մտաւորական կարողութեան ծանօթանալէ յետոյ, չես կրնար չապշիլ այն ընդգրկուն գործունեութեան ու վաստակին համար, որ ունեցաւ Ռումանիոյ այս տաղանդաւոր ու ներհուն քաղաքական-ակադեմական-հասարակական հեղինակութիւնը: Բացառիկ յիշողութեան տեր, անխնայ աշխատող, համայնագիտարանի մը ծանօթութիւններով բեռնաւոր Նիքոլայ Երկրլայի հայ հանրութեան լաւագոյնս ծանօթացուց անուանի պատմաբան, կոթողային «Պոլիս եւ իր դերը» (քառահատոր) աշխատութեան հեղինակ, ռումանահայ գրող ու մտաւորական Յակոբ Սիրունի (Ճօլօլեան) իր «Յայ Եկեղեցին ռումէն հողի վրայ. Նիքոլայ Երկրլայ» (Էջմիածին, 1966) եւ «Նիքոլայ Երկրլայի հետ» (Անթիլիաս, 1972) մենագրութիւններով:



Ան ծնած է 18 Յունիս 1871-ին, հիւսիսային Ռումանիոյ (Մոլդովայի շրջան) Բոտոշան քաղաքը: Հոն կ'ապրէին նաեւ հայեր եւ մանկուց արդէն կը սկսի շփուիլ հայ տղոց հետ՝ ծանօթանալով նաեւ հայկական աստուածաբանաց ու սովորոյթներուն: Հինգ տարեկանին որբանալով (հօր կողմէ) կ'ապրի գրկանքներով իր մանկութիւնը մը: Դպրոցական տարիքին արդէն ուսուցիչներ կը նկատեն անոր ընդծին ընդունակութիւններն ու արտակարգ կարողութիւնները: 17 տարեկանին կը դառնայ բովանդակ Մոլդովայի առաջնակարգ աշակերտը եւ Նոյն տարին կը մտնէ համալսարան եւ մէկ տարիէն կ'աւարտէ գայն՝ չորս տարուան քննութիւնները յանձնելով միահաղոյն կերպով:

Համալսարանական բարձրագոյն կրթութիւնը կը ստանայ երրորդական ուսումներու մէջ՝ Պերլին, Լայպցիգ եւ Փարիզ, որպէս դասախօսներ ունենալով պատմութեան եւ արեւելագիտութեան ոլորտներուն մէջ անուանի գիտնականներ: 1894-ին կը վերադառնայ Ռումանիա դոկտորական տիտղոսով (Լայպցիգի համալսարանէն) եւ բարձր ուսման վկայականով (Փարիզ): 1895-ին կ'ընդունուի Պուրեշի համալսարան որպէս պատմութեան բաժանմունքի դասախօս եւ ապա 45 երկար տարիներ կը մնայ համալսարանին մէջ շրջան մը որպէս տեսուչ (դեկան), 1929-էն՝ վերատեսուչ (ռեկտոր), դասախօս ընդհանուր եւ ռումանական պատմութեան, ռումանական հին գրականութեան, փիլիսոփայութեան: 1910-ին կը դառնայ Ռումանիոյ ակադեմիայի անդամ:

Մինչ ան զբաղած էր մանկավարժական պատասխանատու պաշտօնով, այլազան բնագաւառներ նետուելով, հոն եւս կ'արձանագրէ ուշագոյն յաջողութիւններ, ինչպէս քաղաքական, գիտական, լրագրական, թարգմանչական, գրական, ազգերազգիտական, տարբեր երկիրներու մէջ՝ դասախօսական: Ան հետզհետէ պատուոյ դոկտորի տիտղոսներ կը նուաճէ ոչ միայն ռումանական բոլոր համալսարաններէն, այլեւ՝ ժընևի, Լիոնի, Օքսֆորտի, Ստրասբուրգի, Գրոնի, Փարիզի, Պրաթիսլավայի, Մատրիտի, Աթենքի, Ալժիրի եւ այլն: Ապա կը նետուի քաղաքական ասպարեզ եւ 1907-ին կ'ընտրուի Ազգային ժողովի երեսփոխան (1918-20 թ.՝ Նախագահ) եւ երկար տարիներ կը գործէ հոն. աւելի ուշ կը դառնայ ծերակուտական: Կ'արձանագրուի Ազգային Գիւղացիական կուսակցութեան անդամ եւ կ'ըլլայ քաղաքահաներէն մէկը անոր, աւելի ուշ՝ անկէ քաշուելով իր փոքրաթիւ համայնութիւններով կը հիմնէ իր կուսակցութիւնը: Առաջին Աշխարհամարտին, Երկրլայ փորձած է պահպանել Ռումանիոյ չեզոքութիւնը եւ ընդդիմացած գերմանական ծաւալապաշտութեան. բայց երբ Պուրեշ կ'իյնայ գերմաններու ձեռքը, ան իր համակիրներով կը քաշուի Եաշ քաղաքը:

Մինչեւ Երկրորդ Աշխարհամարտ Ն. Երկրլայ կը զբաղի դասախօսութիւններով, գիտական պրպատումներով, հրապարակագրութեամբ: 1931-ին երբ կը նշուէր իր յոբելեանը, Զարոյ Բ. վեհապետը անակնկալի բերելով շատերը, զինք կը նշանակէ երկրին վարչապետ, որ կը վարէ շուրջ մէկ տարի՝ վերադառնալու համար գիտական ուսումնասիրութիւններու: Երջան մը եղած է նաեւ կրթութեան նախարար:

1940-ականներուն, երբ Երկրլայի տարածքին կատաղորէն կը մոլեգնէր նացիզմը, Ն. Երկրլայ կը ծառանար այս մոլեռանդ շարժման դէմ: Արդէն տապալած էր Զարոյ Բ.-ը: Երկրլայ իշխանութիւնը ստանձնած էր ֆաշիստամետ «Կանաչ Շապիկաւորներ» կոչուած շարժումը, որ ստեղծած էր «Երկրլայեան Գվարդիա» ահաբեկչական միաւորը, որուն նպատակն էր ֆիզիքապէս չեզոքացնել խաղաղասիրութեան կողմնակիցները եւ Ռումանիան դնել Հիթլերի մականին տակ: Մինչ Ն. Երկրլայ կը նախագահ վստացը, որ կը սպառնար երկրին եւ իր գրիչով կը պայքարէր այս ահազանացող ուժին դէմ, 1940 Նոյեմբեր 27-ի առաւօտուն, եթէ «կանաչ շապիկաւորներ» Պուրեշ տանող ճամբուն վրայ, անտառի մը մէջ, ահաւոր պայմաններու մէջ կը սպաննեն իրենց երկրին ամենագիտուն գաւազը՝ Ն. Երկրլայ: Անոնք

ԱՄԵՏԻՍ ՈԱԶՄԻԿ

մահուամբ դատապարտած էին զինք: Անոր թաղումը տեղի կ'ունենայ անշուք պայմաններու տակ: Մարտիագրու այդ օրերուն մի քանիներ համարձակած էին ներկայ ըլլալու անոր յուղարկաւորութեան: Նոյնիսկ անոր հայ բարեկամները զգուշացած էին նման քայլէ մը: Միայն հայոց ազգային վարժարանի երկու ուսուցիչներ քաջութիւնն ունեցած էին իրենց յարգանքի տուրքը մատուցելու մեծ երախտաւորին: Անոնցմէ մին Լեւոն-Կարապետ Պալճեանն էր, հետագային ողջ հայութեան պատկառանքը վայելած Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգէն Ա. Վեհափառ Հայրապետը:

«Քիչեր մտքի մեծ տիտաններէն կրցած են այնքան բեղմնաւոր ըլլալ իրենց կեանքին մէջ եւ այնքան վաստակ թողուլ իրենցմէ յետոյ, որքան Նիքոլայ Երկրլայ: Այդ տեսակետով ֆեմոնեն (երեւոյթ) մըն էր Երկրլայն», - կը գրէ Յակոբ Սիրունի: Ռումէն մատենագետ մը, երբ անոր գրչի արտադրութեանց մատենախօսութիւնը կը պատրաստէր 1934-ին, հատորով լոյս տեսած գիրքերուն թիւը 1003 հատոր ցոյց կու տար, բացի 12735 յօդուածներէն եւ 4963 գրախօսականներէն: Հետագային եւս Նոյն առատութեամբ բազմահարիւր գիրքեր հրապարակեց ան՝ հազարաւոր յօդուածներու առընթեր: Ամբողջ գրադարան մը թողուց Նիկոլայ Երկրլայ:

Իր գործերը գրած է տարբեր լեզուներով՝ ռումաներէն, գերմաներէն, ֆրանսերէն, անգլերէն, իտալերէն, յունարէն: Տարբերոյթ գործերէն յիշենք. - «Ռումէն ժողովուրդի պատմութիւնը ըստ ուղեւորներու» (4 հատոր), «Ռումէն ժողովուրդի պատմութիւն» (9 հատոր), «Օսմանեան կայսրութեան պատմութիւն» (5 հատոր), «Բիւզանդական կայսրութեան պատմութիւն», «Ռուսոմասիւրութիւններ եւ փաստաթուղթեր» (31 հատոր), «Մարդկութեան պատմութիւն», տասնեակ մը հատորներ հաշակրաց արշաւանքներուն նուիրուած, տասնեակ մը հատորներ Երոպայի պատմութեան շուրջ (Իտալիա, Ֆրանսա), մի քանի հատոր Պալլասներուն նուիրուած: Տարբեր վաւերագրերու ուսումնասիրութիւններ, «Պատմութիւն ռումանական գրականութեան» (7 հատոր), «Պատմութիւն ռումաներէն կրօնական գրականութեան», հատորներ նուիրուած ռումանական եկեղեցու եւ կրօնին, ռումանական բանակին, առեւտրին, արհեստներուն, ճարտարարուեստին, բժշկութեան, ռումանական մամուլին, «Պատմութիւն Պուրեշի», տասնեակ մը հատորներ ռումանացի անուանի դէմքերու նուիրուած, մի քանի յուշագրական հատորներ, Նօթեր, բանաստեղծութիւններ, պատմութեան, հեքիաթներ, առօրեայ եւ պարբերական մամուլին մէջ ցրուած անչափելի յօդուածներ: Թարգմանած է յոյն դասականներ Զերոդոտոսի, Եսքիլէսի եւ ուրիշներու գործերը:

ՆԻԶՈՒՆ ԵՐՐԿԱ ԵՒ ՀԱՅ ԵՎԵՂԵՑԻՆ

Ռումանիոյ հայոց թեմը նուիրականացման եւ պետականօրէն վաւերականացման կարիքն ունէր: Գաղութը ամբողջ 10 տարի դիմումներ կը կատարէր ռումանական Նախորդ կառավարութեան, որոնք ձգձգելով եւ լոկ խոստումներով կը յղձեցնէին ազգային իշխանութիւնները: Երկրլայ հազիւ վարչապետ դարձած ձեռնամուխ կ'ըլլայ գործին յաջողութեան: Ան ընթացք տալով հայոց հերթական դիմումին եւ այս առիթով պատրաստելով անհրաժեշտ օրինագիծը 1931 Մայիս 28-ին զայն կը յղէ օրենսդիր իշխանութեան: Հարցը արագ-արագ անցնելով գեղանգան յանձնաժողովներու բովէն, օրինագիծը Յուլիս 13-ին կը դրուէր խորհրդարանի սեղանին: Յաջորդ օրը կը վերածուի օրենքի եւ 3 Օգոստոսին կը հրատարակուի պաշտօնաթերթին մէջ: Շուրջ երեք ամիս ետք, 27 Հոկտեմբերին, Յունիկ արք. Չօհրապետն կը հաստատուի իբրեւ առաջնորդ, իսկ 25 Նոյեմբերին կը վաւերացուէր թեմը: Աւելի ուշ, Յունիկ Սրբազանին պիտի յաջորդէր Վազգէն վրդ. Պալճեան (հետագային Եպիսկոպոս եւ ապա ամենայն հայոց կաթողիկոս):

ՆԻԶՈՒՆ ԵՐՐԿԱ ԵՒ ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Ն. Երկրլայի գիտական ժառանգութեան մէջ Եակն կշիռ ունին անոր հայագիտական հետազոտութիւնները: «Հայերը եւ ռումանները» (ֆրանսերէն) գործին մէջ համառօտակի կ'անդրադառնայ հայոց պատմութեան, հայկական գաղթավայրերուն եւ ռումանահայ գաղութի պատմութեան: Ան յաճախ շեշտած է թէ հայերը մեծ դեր ունեցած են Ռումանիոյ տնտեսութեան, առեւտրին եւ մշակոյթին զարգացման մէջ, մասնաւոր Սուլաւայի եւ Բոտոշանի հայկական համայնքները: «Չորս դասախօսութիւններ Հայաստանի մասին (ռումաներէն), «Հայերը Ռումանիոյ մէջ» (ֆրանսերէն), «Փոքր Հայաստանի համառօտ պատմութիւն (Կիլիկիոյ հայկական պետութեան մասին, ֆրանսերէն), «Հայ արուեստի իրերը Ռումանիոյ մէջ» եւ այլն: Ան իր հաշակրաց արշաւանքներուն նուիրուած գործերուն մէջ յայնօրէն անդրադարձած է Կիլիկիոյ հայոց քաղաքական հմտութեան եւ իմաստուն քայլերուն: Ան աշխատակցած է ռումանահայ «Անի» (Ani) եռամսեայ հանդէսի հայագիտական ուսումնասիրութիւններով: Ան քաջալերած է զօրակցած է «Նաւասարդ» (1923-1926) գրական ամսագիրին հրատարակութեան: Իր վարչապետութեան շրջանին (1932) հնարաւոր դարձուց Արշակ Զօպանեանի այցելութիւնը Ռումանիա: Ինչ Ռումանիա հրաւիրեց աշխարհառջայ բիւզանդագետ Սիրարփի Տէր Ներսեսեանը: Ան ռումաներէնի թարգմանեց հայ գրականութենէն եւս, ինչպէս Կոստանդին Երզնկացիի, Ֆրիկի, հաջատուր Կեչառեցիի, Յովհաննէս Թլկուրանցիի, Սկրտիչ Պեշկոպաշլեանի, Յովհաննէս Թումանեանի, Վահան Տէրեանի, Սիպիլի, Վահան Թէքեանի, Անայիսի բանաստեղծութիւններէն: Վըլլէ-տէ-Մոնտէի մէջ հիմնած է համալսարան, ուր տեղի կ'ունենային հայ մշակոյթին նուիրուած ձեռնարկներ, պարեր ու երգեր. իր մէկ թատերգութեան համար կը խնդրէ հայկական պարախումբին ելոյթը, որովհետեւ միշտ մնացած է հմայուած հայ մշակոյթով: Ան

ՍՓԻՒՌԲ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ.

ՄՐՅԱԿԻՑՆԵՐ, ԹԸ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

ՎԱՐՈՒԾ ԹԵՆՊԵԼԵԱՆ

Հայ ժողովուրդի պատմութեան մէջ առանձնայատուկ տեղ ունի երեւոյթ մը, որ քիչ ժողովուրդներու պարագային կը հանդիպինք: Մենք ունինք պետութիւն, բայց նաեւ ունինք աշխարհով մէկ տարածուած համայնքներ, որոնք ոչ միայն մշակութային կամ տնտեսական դեր կը խաղան, այլեւ յաճախ ազգային հարցերու շուրջ կ'արտայայտուին Նոյն հետաքրքրութեամբ եւ պատասխանատուութեան զգացումով. ինչպէս Հայաստանի մէջ ապրող քաղաքացիները:

Թեւեւ այս իրականութիւնը ծնունդ առած է պատմական ողբերգութեւն, բայց տասնամեակներու ընթացքին դարձած է ազգային գոյատեւման կարեւոր յենասիւններէն մէկը: Սփիւռքը պահպանած է լեզուն, մշակոյթը, կրթական հաստատութիւնները եւ ազգային ինքնութիւնը այն ժամանակաշրջաններուն, երբ հայկական անկախ պետութիւն գոյութիւն չուներ:



Սակայն Հայաստանի վերանկախացումէն ետք, հարցում մը ինքզինք կը պարտադրէ. Ի՞նչ պէտք է ըլլայ Սփիւռքի եւ Հայաստանի Հանրապետութեան յարաբերութեան բնոյթը: Այս հարցին պատասխանելու համար նախ պէտք է ընդունիլ պարզ իրողութիւն մը: Պետութիւնը եւ ազգը Նոյն բաները չեն: Ազգը աւելի այն հասկացողութիւն է, իսկ պետութիւնը՝ իրաւական եւ քաղաքական կառոյց: Հայաստանի Հանրապետութիւնը միջազգային ճանաչում ունեցող ինքնիշխան պետութիւն է, որուն քաղաքացիներն են, ի վերջոյ, պատասխանատու իրենց իշխանութիւններուն ընտրութեան, վերահսկողութեան եւ փոփոխութեան:

Այս պատճառով ալ դժուար է վիճարկել այն սկզբունքը, որ Սփիւռքը, որքան ալ հայրենասէր կամ նուիրուած ըլլայ, չի կրնար եւ պէտք չէ ուղղակի կերպով միջամտէ Հայաստանի ներքին քաղաքական հարցերուն: Շատեր կը կարծեն, թէ պետութիւնը համայն հայութեան պատկանող զգացական սեփականութիւն մըն է, ուր իւրաքանչիւրը կրնայ հեռակայ կարգով թելադրել, ներագրել կամ Նոյնիսկ միջամուխ ըլլալ ներքին հարցերուն՝ ըստ սեփական պատկերացումներուն: Պետութեան ներքին որոշումները պէտք է ընդունուին այն քաղաքացիներուն կողմէ, որոնք ամէն օր կ'ապրին այդ որոշումներուն հետեւանքները: Բայց սխալ պիտի ըլլար այս երակացուցելու մեկնաբանել որպէս Սփիւռքի դերին նուագեցումը: Ընդհակառակը:

Ամենէն յաջող պետութիւնները չեն ծաղկիր ու զարգանար միայն իրենց ներքին կարողականութեամբ եւ ուժով: Անոնք կը յենին նաեւ արտաքին կապերու, գիտելիքի, փորձառութեան եւ միջազգային ազդեցութեան վրայ: Իսկ ուշ է, որ Սփիւռքը կրնայ դառնալ Հայաստանի մեծագոյն ռազմավարական առաւելութիւններէն մէկը:


Աշխարհի տարբեր երկիրներու մէջ հայ մասնագետներ կը ղեկավարեն ընկերութիւններ, համալսարանական կեդրոններ, թթաբափներ, գիտահետազոտական հաստատութիւններ եւ նորարարական ծրագրեր: Անոնք կուտակած են գիտելիք եւ փորձառութիւն, որոնց արժէքը երբեմն շատ անկէ մեծ է, քան նիւթական օժանդակութիւնը: Տասնամեակներ շարունակ «Սփիւռքի օժանդակութիւն» արտայայտութիւնը հիմնականօրէն կապուած էր նուիրատուութիւններու կամ բարեսիրական նախաձեռնութիւններու: Շատեր կը կարծեն, թէ Սփիւռքի դերը սահմանափակուած է քանի մը պարզ, խորհրդանշական քայլերով. դրամահաւաք մը կազմակերպել, բարեգործական ծրագիր մը հովանաւորել կամ ընկերային ցանցերուն մէջ հայրենասիրական կոչեր տարածել: Այս բոլորը արժէքաւոր են, բայց անոնք միայն առաջին քայլերն են հազար մղոնին: Այսօր, 21-րդ դարը տարբեր մտածողութիւն եւ տարբեր մօտեցումներ կը պահանջէ:

Հայաստանի կարիքը միայն դրամով չի սահմանափակուիր: Այսօր, Հայաստանի Հանրապետութիւնը ունի կարիքը արդիականացման, տնտեսական ճկունութեան, գիտելիքի, նորարարութեան, կառավարման փորձառութեան, միջազգային ցանցերու եւ մասնագիտական կարողութիւններու: Ահա թէ ինչո՞ւ Սփիւռքի ամենէն արդիականեւտ դերը թերեւս ոչ թէ քաղաքական աղմուկի ստեղծումն է, այլ գիտելիքի, փորձառութեան եւ արհեստագիտական հմտութիւններու անդադար փոխանցումը դեպի հայրենիք:

Աշխարհաքաղաքական մրցակցութեան ներկայ պայմաններուն մէջ, փոքր պետութիւններու հզօրութիւնը ոչ միայն կը չափուի բանակով կամ տնտեսական ծրագրով, այլ նաեւ իրենց «փափուկ ուժով»: Այս հասկացողութիւնը կը վերաբերի այն կարողութեան, որով պետութիւն մը կամ հաւաքականութիւն մը կրնայ ազդեցութիւն ունենալ ուրիշներու վրայ՝ մշակոյթի, կրթութեան, գիտութեան, նորարարութեան եւ հեղինակութեան միջոցով: Սփիւռքը, իր հանրային ու քաղաքական կապերով, կոչուած է ըլլալու Հայաստանի պետական շահերու լրափիսթական լծակը օտար ափերու վրայ:

ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՐԱՄԵԱԿԸ՝ ՅԻՇԱՏԱԿՈՒՄ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՏԵՍԼԱԿԱՆ

25-28 Յունիս 2026-ի օրերուն, Կիպրոսի տեղական եւ հայկական գաղութը ապրեցան զգացական ջերմ օրեր՝ յիշատակելով Մելգոնեան կրթական հաստատութեան հարիւրամեակը: Աշխարհի տարբեր երկիրներէ ժամանեցին Մելգոնեանի նախկին աշակերտներ թէ շրջանաւարտներ, որոնք իրենց զգացումները միացուցին տեղական գաղութին հետ եւ ստեղծեցին շատ գեղեցիկ «ապրող» օրեր՝ արժեւորելով վարժարանին դերը ազգային-կրթական մեծ առաքելութեան մէջ պատմութեան տարբեր հոլովոյթներու ընթացքին: Մեծ «պրաւօ» մը ցիպրահայ գաղութին, որ շատ գեղեցիկ եւ բծախնդիր կերպով կազմակերպած էր հանդիսութեան այս օրերը՝ ստեղծելով յիշատակելի մթնոլորտ բոլորին:



Բայց կայ զգացական մթնոլորտէն բացի յիշատակումներէն դէպի գործնական եւ ազգային համասփիւռքեան ռազմավարութեան նոր տեսլականի մը անցնելու անհրաժեշտութիւնը եւ գրաւակնը: Մելգոնեան կրթական հաստատութեան հիմնադրութեան հարիւրամեակը պարզապէս անցեալի փառքը յիշելու առիթ մը պէտք չէ որ ըլլայ: Անկախ նաեւ ազգային նոր ռազմավարութեան մը ստեղծելու պահին է: Այս օրերուն, երբ մեծ թիւով մելգոնեացիներ, նախկին ուսուցիչներ, բարեկամներ եւ հայրողներ համախմբուեցան յիշողութիւններու, զգացումներու եւ երախտագիտութեան շուրջ, անհրաժեշտ է, որ այս ստեղծուած խանդավառ մթնոլորտը վերածուի գործնական ազգային ռազմավարութեան: Հարցը այլեւս միայն Մելգոնեանի պատմութիւնը չէ, այլ՝ Մելգոնեանի միջոցաւ եւ անոր հետ համասփիւռքեան ազգային ռազմավարութեան մը տեսլական-ապագան մտածելու առիթ:

Երկար տարիներ Մելգոնեան կրթական հաստատութիւնը եղաւ սփիւռքահայութեան յաջող համահայկական կրթական փորձառութիւններէն մէկը: Ան ոչ միայն դարձաւ հայ երիտասարդներ կը սորվէին ապրիլ իրարու հետ, կը կազմաւորէին ազգային ինքնութիւն եւ կը պատրաստուէին ծառայելու իրենց գաղութներուն եւ համայնքներուն: Անկախ կը մարմնավորէր այն գաղափարը, որ Սփիւռքը մէկ ամբողջութիւն է եւ իր զանակները պէտք է դաստիարակուի համազգային տեսլականով:

Այսօր Սփիւռքի իրականութիւնը նաեւ փոխուած է: Տասնամեակներ շարունակ կարծեցինք, թէ Սփիւռքը ժամանակաւոր վիճակ մըն է, որ օր մը պիտի աւարտի զանգուածային վերադարձով: Ներկայիս պատմութեան ընթացքը ուրիշ ուղղութեան մը մէջ է: Այսօր արդէն յստակ է, որ սփիւռք(ներ)ը կը դառնան հայ ժողովուրդի մնայուն ներկայութիւններէն մէկը: Անոնց դիմագրուած մարտահրաւերները՝ ձուլում, լեզուի կորուստ, ինքնութեան նահանջ եւ ազգային կամոյցներու տկարացում, պահանջ կը ներկայացնեն նոր մտածողութեան-ռազմավարութեան մը եւ զայն իրականացնելու համար ստեղծելու նոր հիմնարկ-միաւորներու: Այս պայմաններուն մէջ Մելգոնեանի վերաբացումը պէտք է դիտուի ոչ թէ որպէս զգացական արդարացում կամ

ԴՊԿՏ. ՀՐԱՅՐ ԸԵՊԵՏԵԱՆ (Նիկոսիա)

անցեալի սխալ(“) որոշումի ետդարձ, այլ որպէս ազգային ռազմավարական անհրաժեշտութիւն: Համասփիւռքեան կրթական կեդրոնի մը գոյութիւնը կրնայ դառնալ այն առանցքը, որուն շուրջ պիտի վերակազմակերպուի ապագայի սփիւռքեան ղեկավարութեան պատրաստութիւնը: Այսպիսի հաստատութիւն մը կրնայ ընդունիլ աշակերտներ աշխարհի տարբեր գաղութներէն, զանոնք կրթել բարձր մակարդակով, ամրապնդել հայերէնը, ազգային գիտակցութիւնը եւ ծառայութեան ոգին, ապա վերադարձնել զանոնք իրենց համայնքներ՝ իբրեւ պատրաստուած առաջնորդներ: Մնայուն հայկական սփիւռքներու համար պէտք է արտադրել ազգային նոր մշակոյթ ու դիմագիծ, որ կը համընկնի աշխարհի ստեղծած նոր իրավիճակներուն հետ:

Այս իմաստով, վերաբացումը ինքնանպատակ չէ ու չի կրնար ըլլալ: Անկախ պէտք է հիմնուի ժամանակակից տեսլականի վրայ: Նոր Մելգոնեանը պէտք է ըլլայ ոչ միայն երկրորդական կրթական հաստատութիւն, այլ նաեւ ուսուցիչներու պատրաստութեան կեդրոն, սփիւռքագիտական հետազոտութիւններու օժախ, երիտասարդական առաջնորդութեան ակադեմիա եւ համահայկական համագործակցութեան հարթակ: Այսօրուան աշխարհը կը պահանջէ նոր հմտութիւններ, նոր կրթական մօտեցումներ եւ նոր ցանցեր, որոնց ստեղծման մէջ Մելգոնեանը կրնայ դարձնալ առաջատար դեր ստանձնել:

Բնականաբար, այսպիսի ծրագիր մը կը պահանջէ քաղաքական կամք, ազգային համաձայնութիւն եւ նիւթական մեծ միջոցներ: Բայց ամենէն առաջ կը պահանջէ հաւատք, որ Սփիւռքը արժանի է երկարաժամկետ ներդրումի: Եթէ կը հաւատանք, որ Սփիւռքը պիտի շարունակէ մնալ հայկական իրականութեան հիմնական եւ մնայուն սիւններէն մէկը, ապա չենք կրնար զայն ձգել առանց համազգային կրթական, մշակութային եւ ազգային կեդրոն ու հիմնարկներու ծրագրումին:

Այս բոլորին վրայ արժէ անցնել Մելգոնեանի աշխարհագրական դիրքը եւ վայրը: Կիպրոսի Հանրապետութիւնը, որ Եւրոպական միութեան լիարժէք անդամ է, առանձնաշնորհուած է աշխարհաքաղաքական շատ կարեւոր եւ դիպուկ վայրով մը: Մեկ կողմէ Կիպրոս շատ մօտ է Միջին Արեւելքին ու տակաւին կամուրջ է Եւրոպայի ու աշխարհի տարբեր երկիրներու հետ: Եւ ինչ խօսք, որ Կիպրոսի Հանրապետութիւնը բարեկամ երկիր է Հայաստանին եւ հայ ժողովուրդին՝ ստեղծելով շատ ջերմ յարաբերութիւններ Հայաստանի Հանրապետութեան եւ հայ ժողովուրդի տարբեր զանգուածներու հետ:

Ուստի՝ Մելգոնեանի հարիւրամեակի ոգեւորութիւնը պէտք չէ սահմանափակուի յուշերով, հանդիսութիւններով եւ զգացական խօսքերով: Այդ բոլորը շատ լաւ են եւ կարեւոր: Այս պահը պէտք է վերածուի կազմակերպուած առաքելութեան՝ յստակ նպատակով, լայն համախմբումով եւ գործնական քայլերով: Հարիւրամեակը պէտք է դառնայ մեկնակետ, ոչ թէ եզրակացութիւն:

Մելգոնեանը արժէ վերաբանալ ոչ միայն որովհետեւ անցեալին մեծ ծառայութիւն մատուցած է, այլ նաեւ որովհետեւ ապագային կրնայ դարձնալ ծառայել: Ազգեր, որոնք կը մտածեն իրենց վաղուան օրուան մասին, կը կառուցեն միտք եւ տեսլական: Եւ միտքն ու տեսլականը իրականացնելու համար պէտք է հաստատութիւններ: Այս իմաստով, հայը եթէ իսկապէս կը հաւատայ Սփիւռքի շարունակական առաքելութեան, պէտք է մտածէ վերաբանալով Մելգոնեանը՝ որպէս համասփիւռքեան ազգային կեանքի համար մէկ նոր ռազմավարական դարձում:

Հայկական սփիւռքի մնայուն կարգավիճակը կ'ամրապնդուի, եթէ ամենակերը կրնանք վերածել յիշատակումներէ դէպի ազգային ռազմավարութեան նոր տեսլականներու իրականացման: Մելգոնեան կրթական հաստատութիւնը մէկ կարեւոր միաւորն է այս իմաստով:

Եթէ կ'ուզենք հայուն կեանքը դնել պատմութեան շարունակականութեան գործընթացի մէջ՝ պիտի հաւատանք ծրագրուած աշխատանքի: Եւ աշխատանքը կը ներառէ կամք: Եւ ուր որ կամք կայ՝ հոն կեանք կայ: Հայուն կեանքը...

ՍՓԻՒՌՔ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ. ՄՐՅԱԿԻՑՆԵՐ, ԹԸ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

Շարունակուած էջ 2-էն

Այս առումով, հայ ժողովուրդը եզակի առաւելութիւն ունի: Հայաստանի Հանրապետութիւնը ունի այն, ինչ սփիւռքը չունի՝ պետականութիւն: Իսկ սփիւռքը ունի այն, ինչ Հայաստանը ամբողջութեամբ չունի՝ համաշխարհային տարածում, բազմազան փորձառութիւն եւ ազդեցութեան բազմաթիւ լծակներ ու կեդրոններ: Երբ այս երկու իրականութիւնները համագործակցին, անոնք կը լրացնեն զիրար: Երբ անոնք կը մրցին կամ կը փորձեն փոխարինել զիրար, կը յառաջանան լարուածութիւններ եւ հիասթափութիւններ: Հետեւաբար հարցը այն չէ, թէ Սփիւռքը պէտք է լքէ, թէ՞ խօսի: Հարցը այն է, թէ ո՞ր ոլորտին մէջ կրնայ ան ամենէն մեծ արժէքը ստեղծել:

Թերեւս ժամանակ է, որ Սփիւռքի եւ Հայաստանի յարաբերութիւնները վերասահմանուին ոչ թէ որպէս քաղաքական ինտերակալութիւն կամ անվերջ ցանկ մը փոխադարձ ակնկալութիւններու, այլ որպէս ռազմավարական գործընկերութիւն:

Մեկը կը կառավարէ պետութիւնը: Միւրը կը բազմապատկէ անոր կարողութիւնները:

Եւ երբ այդ երկու դերերը յստակ ըլլան, Հայաստանն ու Սփիւռքը կրնան աւելի հզօր դառնալ միասին, քան երբեք: Եւ առանձին-առանձին: Երբ Սփիւռքի գիտականը, տնտեսագետը կամ կառավարման մասնագետը իր տաղանդն ու փորձագիտութիւնը կը դնէ հայրենի պետական համակարգի տրամադրութեան տակ՝ առանց քաղաքական նախապայմաններու, այդ պարագային համագործակցութիւնը կը դառնայ գործնական իրականութիւն:

Որովհետեւ ի վերջոյ, հայրենիքի պահպանութիւնը միայն զայն հեռուէն սիրելու կամ անոր ներքին հարցերուն շուրջ վիճելու մասին չէ. անկախ մեր արժէքներուն, պետականութիւնը որպէս բացարձակ հիմք ընդունելու կամքին եւ զայն գիտելիքով ու փափակով ուժով գրահաւորելու պատասխանատուութեան մասին է:

«Տարբերակ 21»

Ն Ի Ք Ո Լ Ա Ե Ռ Կ Ա

Շարունակուած էջ 2-էն

օգնած է հիմնելու Պուրբէշի հայ մշակոյթի տունը, իսկայ գրադարանը. ան ոգեւորուած էր 1935-ին Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան 1500-ամեակի հանդիսութիւններով, որուն բերաւ նաեւ իր հեղինակաւոր մասնակցութիւնը: Մինչ լաւ լուրեր կ'ակնկալէր 1920-ի Սեւրի դաշնագրին ստորագրումով, աւելի ուշ՝ 1923-ի Լոզանի պայմանագիրով պիտի ըլլար յուսախաբ եւ քննադատը միջազգային դաւանեց թաղաքականութիւնը հայոց նկատմամբ: Մեծ Եղեռնին եւ յատկապէս Իզմիրի կոտորածէն ետք (1922), ան իր սուր գրիչով, իր խմբագրած թերթերով հանդէս եկաւ օսմանեան վայրագութիւնները ձաղկող քննադատութիւններով, ծանրակշիռ մեղադրանքներով:

ՌՈՍԱՆԵԼԻ ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՆ ՄԸ

Նիքոլա Եորկա մտահոգ էր հայ ինքնութեան պահպանման անընդհատ պայմաններէն: Ան հաւատարմորէն հայոց հայրենիքին գոյութեան եւ անոր կարեւորութեան (և. Հայաստանի մասին է խօսքը): Յակոբ Սիրունին է վկայողը. «Ու պիտի չմոռնամ երբեք սաստը, զոր անգամ մը ընդունեցինք Եորկայէն: Ռոմանախայ միութեան ղեկավար կազմը զացեր էր Վրէժ-տէ-Մուստէ, անոր աջակցութիւնը խնդրելու համար հայ մարմիններու կողմէ պետութեան մօտ կատարուած դիմումի մը առիթով հայոց հաւաքական քաղաքացիութեան մասին: Գրիգոր Զանգաբժեան, որ խօսք առաւ յանուն մեր պատուիրակութեան, միամտութիւնն ունեցաւ ըսելու, թէ երբ քաղաքացի դառնալով հայերը աւելի շուտով պիտի լուծուին ռումէն ընտանիքին մէջ: Եորկա ոտքի ելաւ սրտմտած. - Հապա՛ Հայաստանը,- գոչեց. ո՞վ պիտի չէնցնէ Հայաստանը... ինչ պիտի ընէ ան, երբ որ դուք ձուլուիք ուրիշ ազգերու մէջ. ռումէն լաւ քաղաքացիներ եղէք, բայց մի մոռնաք, որ Դուք կը պատկանէք Հայաստանի»:

Իսկական հայասեր քաղաքական մարդ մը ահաւասիկ:

ՅԻՇԱՏԱԿԵԼԻ ԴՐՈՒԱԳ ՄԸ

Ն. Եորկա անգամ մը կ'այցելէ Վենետիկ. հոնկէ դեղձանիկ մը կը բերէ հետը, գորս նուիրած էին Մխիթարեան հայրերը: Ան դեղձանիկը անուաներ է «Հայաստան»: Իր տան մէջ, երկու վանդակներու մէջ պահած էր «Հայաստան»ն ու այլ դեղձանիկ մը: Ան իր այցելուներուն կ'ըսէ. ««Հայաստան»ը գետնաձիգ եմ իր ռումէն քրոջը քովիկը, որպէսզի հայերէն երգել սորվեցնէ անոր...»: Եորկա հրապարուում էր հայկական երաժշտութեամբ, բնագի հայոց երգը լաւագոյնս կ'արտայայտէ հայոց վիշտն ու տառապանքը: Ն. Եորկա բանաստեղծութիւն մըն ալ նուիրեց հայոց.


Գերուած երկրէն՝ վտարանդի պանդուխտներ, Միշտ անուանի էք երկրիս վրայ հանձնել, Որ կը տանիք լուկ հին անունն ու լեզուն, Ուր տարագրեց ծակատագիրը դժճէ:

Դուք մայրենի երկրէն ձեզի հետ տարիք Ձեր սիրական տան ծաղիկները բոլոր, Ու գեղարուեստն անբողջ չքնաղ, հինաւուրց, Կապոյտ ծովի լատինական ափին վրայ:

Այնպէս որ երբ ծնէ կարօտը ձեր վրայ, Պիտի դարդի ձեր ցամա՛ երբ որ դուք դիտեք, Թէ՛ ձեր ետին կանգուն է հողը Հայրենիք, Ձեր հետ այստեղ է քերթութիւնը անբողջ:

ԼԵՒՈՆ ՇԱՌՈՅԵԱՆԻ ՇԵՂԻՆԱԿՈՒԹԵԱՄԲ «ՀԱՅ ԳԻՐԻ ԵՒ ՄԵԼԳՈՆԵԱՆԻ ՏԱՐՈՆՅՈՒ ՄՊԱՍԱԽՈՐՆԵՐ» ԵՐԿԱՍԻՐՈՒԹԵԱՆ Ա. ՀԱՏՈՐԸ ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ՀԱԼԵՊԻ ՄԷՅ

Տարօն-Տուրուբերանի հայրենակցական միութեան Հայկալի վարչութիւնը ուրախութեամբ կը տեղեկացնէ, թէ արդէն իսկ տպագրուած ու հրատարակ հանուած է իր կողմէ հովանաւորուած նոր հատոր մը, որ կը կոչուի «Հայ գիրի եւ մշակոյթի ՏԱՐՈՆՅՈՒ ՄՊԱՍԱԽՈՐՆԵՐ»: Պատմագիտական ու բանասիրական բնոյթի այս նորատիպ գիրքին հեղինակը հալեպաբնակ կրթական մշակ ու գրականագետ Լեւոն Շառոյեանն է: Հատորը 320 էջ է ու պատկերազարդ: Ինչպէս խորագրէն ալ կարելի է ենթադրել՝ երկասիրութիւնը լուսարձակ կը բանայ



պատմական Տուրուբերան նահանգի (Տարօն, Մուշ, Բաղէշ, Սասուն եւ շրջակայք) ծնունդ այն բոլոր մտաւորական դէմքերուն վրայ, որոնք ծառայած են հայ գիրին ու դպրութեան եւ առաւել կամ նուազ չափով ներդրում մը ունեցած են հայ ընդհանրական մշակոյթի ծաղկումին մէջ:

Այսպէս, սկսելով Հացեկաց գիւղի մեծ գաւկէն՝ Մեսրոպ Մաշտոցէն, գիրքին մէջ ժամանակագրական կարգով կը տողանցեն նախ իր նորագոյն տարածքի երեւելի դէմքերը՝ Մովսէս Խորենացի, Մամբրէ Վերծանող, Դակոբ Անյաղթ, Յովհան Եպս. Մամիկոնեան եւ այլն, այնուհետեւ անոնց կը միանան յաջորդ դարերէն ծանօթ-անծանօթ բազմաթիւ դէմքեր: Առատ են մա՛նաւանդ միջին դարերու դէմքերը. հոս կը գտնենք պատմիչ Ստեփանոս Ասողիկ Տարօնացին, կրթական ու հոգեւոր գործիչ Պողոս Տարօնացին, Յովհաննէս վրդ. Կոզեմը, երաժշտագետ Խաչատուր Տարօնացին, Գլաձորի համալսարանի հիմնադիրները՝ Ներսէս Մշեցիի ու Եսայի Նչեցիի, մանրակարիչ Թորոս Տարօնացին, մատենագիր Գրիգոր Խլաթեցիի, մինչեւ իսկ Ս. Գրիգոր Տաթեւացին,

Շարունակութիւնը տեսնել էջ 4

ԼԵՒՈՆ ՀԱՌՈՅԵԱՆԻ ՇԵՂԵՆԱԿՈՒԹԵԱՐ «ՀԱՅ ԳԻՐԻ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԻ ՏԱՐՈՆՅՈՒ ՄՊԱՍԱԽՈՐՆԵՐ»...

Շարունակուած էջ 3-էն

որուն համար կ'ըստի, թէ տարօնցի ծնողաց զաւակ է: Այս շարքը դեռ կ'երկարի՝ ընդգրկելով Առաքել Բաղդէցիին, տաղերգակ Մկրտիչ Նաղաշը, պատմիչ Թովմա Մեծոփեցիին եւ տասնեակ մանրանկարիչներ, ծաղկարարներ ու հոգեւորականներ, ոմանք՝ Նուիրապետական աթոռներու գահակալներ՝ Ի Ս. Էջմիածին, Ի Սիս, Ի Ղաթամար, Երուսաղէմ եւ Կ. Պոլիս: Այս բոլորին կենսագրութիւնները զուգորդուած են տեղագրական, պատմագիտական եւ մատենագիտական հարուստ տուեալներով, որոնք մեծապէս դիրամատու չէլի կը դարձնեն գործին ընթերցումն ու ընկալումը: Առաւել եւս՝ գործը կը վերածեն սկզբնաղբիւրի մը:

Ակնյայտ է, որ Լեւոն Շառոյեան երկար տարիներ աջքի լոյս թափած է այս աշխատասիրութեան վրայ, պրպտելով ու պեղելով ոչ միայն առկայ տպագիր հայ մատենագրութիւնն ու գրականութիւնը, այլեւ հայ մամուլի հին հաւաքածոներ, անոնց խորշերէն դուրս բերելով թանկագին ու յաճախ անստգիտ տուեալներ:

Իր յառաջաբանին մէջ, հեղինակը իր այս գործը կը նկատէ Տարօն Աշխարհին ձօնուած արեան ու սրտի պարտք մը: Բժականոր մօտեցումով, ճշգրտասիրութեամբ եւ մանաւանդ արեւմտահայերէն մեր մայրենի լեզուին նկատմամբ ցուցաբերուած կատարել փարոմով ու հոգածութեամբ՝ Լ. Շառոյեան ընթերցողին առջեւ կը փռէ անծանօթ տեղեկութիւններու եւ յորդահոս գիտելիքներու վիթխարի պաշար մը, որ վստահաբար պիտի գնահատուի ու արժեւորուի հայ բանասիրութեան կալուածէն ներս:

Հատորին սկիզբի էջերուն վրայ հեղինակը թռուցիկ ակնարկով մը տուած է ամփոփ պատմականը Տարօն-Տուրուբերանի հայրենակցական միութեան, որ հիմնուած է 1917-ին, Ամերիկա: Այդ թուականէն ցայսօր՝ Միութիւնը ծաւալած է բազմադիմի գործունեութիւն, պարբերաբար հրատարակելով Նաեւ գիրք ու մամուլ:

Նորատիպ գիրքը երկարաշունչ ծրագրի մը Ա. հատորն է: Յաջորդ Բ. հատորը պիտի ընդգրկէ Տարօնի գաւակ այն մտաւորականները, որոնք ապրած ու գործած են առաւելաբար Սփիւռքի եւ Խորհրդային Ռուսաստանի մէջ: Եւ այս դաշտը շատ ընդարձակ է: Արդէն, ներկայ հատորին Բ. գլուխը Նախաճաշակ մը կու տայ յաջորդ հատորին մասին, որովհետեւ այստեղ ներկայացուած են որոշ չափով մեզի ծամանակակից տասը դէմքեր, ինչպէս՝ «Ազգարար»-ի խմբագիր Մանուկ Ասլանեան, ներհուն մտաւորական Զմայեակ Գրանեան, ֆրանսահայ արձակագիր Պետրոս Զարոյեան, գրագետ երուարդ Տարօնեան, մատենագետ Արտաշէս Տէր իսաչատուրեան, բանաստեղծ Սասուն Գրիգորեան եւ այլն:

Տարօն-Տուրուբերանի հայրենակցական միութիւնը կը յուսայ, որ տարբեր գաղութներու իր մասնաճիւղերն ու անհատ հայրենակիցները գործնապէս կը սատարեն այս արժեքաւոր հատորին տարածման ու ծանօթացման, ի պանծացումս կորուսեալ մեր բնօրրանին ու անոր արգանդէն ծնած հայ տաղանդներուն:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԻԹ

BIJOUTERIE GARO հաստատութիւնը կարիքը ունի՝

- Կարպետ ոսկերիչ ձեռնային աշխատանքի «սատեքեր»
- Փայլեցնող (ծիւածի)
- Matrix

Պուրճ Զամուտի հրապարակ, AUDI դրամատան շէնք, առաջին յարկ:
Սեփականատէր՝ Կարօ Գրիգորեան
Հեռաձայն՝ 03 207 772 - 01 266514

المصاح الأرماني الحارونية - لبنان
ՀԱՅ ԱՉԱՅՅԻՆ ԲՈՒԺՄԱՐԱՆ - ԱԶՈՒՆԻԷ ԼԻԲԱՆՈՆ
ARMENIAN SANATORIUM - AZOUNIEH LEBANON

ԱԶՈՒՆԻԷ ՀԱՅ ԱՉԱՅՅԻՆ ԲՈՒԺՄԱՐԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ Ի ՅԱՅԿԱԿԱՆ ՎԱՐՄԱՐԱՆՆԵՐԸ

- Հայ Աւետ. Շամլեան Թաթիկեան Վարժարան 16.860.000 Լ.Ն. 144\$
- Հայ Աւետ. Երկրորդական Վարժարան, Այնճար 13.950.000 Լ.Ն. 170\$
- Յառաջ Գալուստ Կիւլպէնկեան Վարժարան, Այնճար 20.600.000 Լ.Ն. 578\$
- Հայ Կաթողիկէ Ս. Իսաչ-Հարպոյեան Վարժարան 44.995.000 Լ.Ն. 319\$
- Հայ Աւետ. Կեդրոնական Բարձրագոյն Վարժարան 14.610.000 Լ.Ն. 235\$
- Վահան Թեքեան Վարժարան 14.090.000 Լ.Ն. 88\$
- Ազգ. Եղիշէ Մանուկեան Գոլէճ 10.390.000 Լ.Ն. 311\$
- Սահակեան Լեւոն Մկրտիչեան Գոլէճ 10.320.000 Լ.Ն. 24\$
- Հայ Կաթողիկէ Մեսրոպեան Երկր. Վարժարան 47.065.000 Լ.Ն. 233\$
- Հ.Բ.Ը. Միութեան Վարժարաններ 26.200.000 Լ.Ն.
- Ազգ.. Խրիմեան Նուպարեան Վարժարան, Թրիփոլի 8.400.000 Լ.Ն.
- Ազգ. Միացեալ Վարժարան 21.150.000 Լ.Ն. 95\$
- Հայ Աւետ. Գոլէճ 150\$
- Մխիթարեան Վարժարան 8.065.000 Լ.Ն. 56\$

ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԵՒ ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- Հայ Աւետ. Եկեղեցի, Մարաշ 5.960.000 Լ.Ն.
- Հայ Աւետ. Եմնանուէլ Եկեղեցի, Ամանոս 2.150.000 Լ.Ն. 102\$
- Ս. Յարութիւն Եկեղեցի, Ճիւնի 700.000 Լ.Ն.
- Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցի 805.000 Լ.Ն. 5\$
- Ս. Յովհաննու Կարապետ Եկեղեցի 4.565.000 Լ.Ն.
- Ս. Աստուածածին Եկեղեցի 3.530.000 Լ.Ն. 17\$
- Ս. Յարութիւն Եկեղեցի, Ունյէլ 10.890.000 Լ.Ն.
- Ս. Նշան Մայր Եկեղեցի 800.000 Լ.Ն. 160\$
- Ս. Վարդանանց Եկեղեցի 4.885.000 Լ.Ն. 37\$
- Ս. Արագիս Եկեղեցի 2.060.000 Լ.Ն.
- Ս. Յակոբ Եկեղեցի 2.665.000 Լ.Ն.
- Ս. Պօղոս Եկեղեցի, Այնճար 5.760.000 Լ.Ն. 70\$
- Հայ Աւետ. Եկեղեցի, Այնճար 3.110.000 Լ.Ն. 201\$
- Հայ Աւետ. Եկեղեցի, Էշրէֆիէ 6.225.000 Լ.Ն. 136\$
- Հայ Կաթողիկէ Ս. Փրկիչ Եկեղեցի 3.165.000 Լ.Ն. 10\$
- Հայ Կաթողիկէ Ս. Իսաչ Եկեղեցի 2.450.000 Լ.Ն. 91\$
- Հայ Կաթողիկէ Տիրամայր Վարդարանի, Այնճար 1.370.000 Լ.Ն. 32\$
- Հայ Կաթողիկէ Տիրամայր Ֆաթիմա, Ջահիլ 1.635.000 Լ.Ն. 17\$
- Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի, Ջահիլ 7.670.000 Լ.Ն. 17\$
- Հայ Կաթողիկէ Աւետման Եկեղեցի, Էշրէֆիէ 2.420.000 Լ.Ն.
- Հայ Կաթողիկէ Ս. Եղիա Եկեղեցի 5.340.000 Լ.Ն. 201\$
- Հայ Աւետ. Ա. Եկեղեցի 500\$
- Ս. Գեորգ Եկեղեցի, Հաճըն 1.720.000 Լ.Ն. 20\$
- Ս. Սարգիս Եկեղեցի Թաղականութիւն 100\$
- Ս. Յակոբ Եկեղեցի Թաղականութիւն 200\$
- Ս. Պօղոս Եկեղեցի Թաղականութիւն, Այնճար 100\$
- Ս. Գրիգոր Եկեղեցի Թաղականութիւն, Ջահիլ 50\$
- Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցի Թաղականութիւն 100\$
- Ս. Գեորգ Եկեղեցի Թաղականութիւն 100\$

Կանխայայտ շնորհակալութիւն:

Ազունիի Հայ Ազգային Բուժարան



ԹԵՆԻՍ ԽԱԶԱՆՈՎԻ ՅԱԶՈՂ ՄԵԿՆԱՐԿԸ «ՌԻՄՊԼՏՈՆ ԿՐԱՆ ՍԼԱՄ»-Ի

Կարեն Խաչանովը յաջող մեկնարկ ունեցաւ Ուիմպլտոն 2026-ին՝ առաջին փուլին յաղթելով անգլիացի թենիսիստ Պիլի Հարիսին: Հայազգի ռուս թենիսիստը, որ Նախկին Ուիմպլտոնի քառորդ աւարտականին հասած էր, առաջ



անցաւ առաջին փուլէն՝ 3-1 հաշուով (6-3, 5-7, 6-3, 6-3): Խաչանովի յաջորդ մրցումը տեղի պիտի ունենայ այսօր՝ գերմանացի Եանիկ Հանֆմանի դէմ:

Ընթացմարտ ՀԱՅԱՍՏԱՆ ՆՈՒԱՃԵՅ ՄԵԿ ՊՐՈՆՁԷ ՄԵՏԱԼ «ՊԱՅՔԱԼ ՕՓԸՆ»-ԻՆ

«Պայքալ Օփըն» միջազգային մրցաշարը տեղի ունեցաւ Ուլան-Ուտէ քաղաքին մէջ: 28-րդ միջազգային մրցաշարին Հայաստանը ներկայացուցին երկու ըմբիշներ: Խումբին միակ պարգեւը ձեռք բերաւ 23-ամեայ Գուրգէն Սիմոնեանը, 97 ըկ դասակարգին մէջ երբ նուաճեց պրոնզէ մետալ, մինչդեռ Արման Մուսիկեանը մաս կազմեց 65 ըկ դասակարգին եւ աւարտեց առանց մետալի:



Նաեւ պետք է նշել որ հայազգի ըմբիշ Արսէն Բալայեանը, ներկայացնելով Կալիֆոռնիայի Նահանգը, նուաճեց ոսկէ մետալ 86 ըկ դասակարգին մէջ:

Ֆորմուլա 1 «ՄԵՐՍԵԵՍ» ԿԸ ՏԻՐԱՊԵՏԷ ԱԽՍՏՐԻՈՅ ԿՐԱՆ ՓՐԻՒՆ

Աստրիոյ Կրան Փրին , որ տեղի ունեցաւ «Ռետ Պուլ Ռիկ»-ին վրայ, շահեցաւ ճորճ Ռասելը (Մերսեդես)՝ վերահսկուած մրցարշաւով մը, որ հիմնուած էր անուարողերու լաւ կառավարման եւ փոխ մուտքը յաջող վարելուն վրայ: Մաքս Վերշտափեն (Ռետ Պուլ) երկրորդ տեղը գրաւեց՝



վերջաւորութեան հետապնդելով առաջատարները, իսկ Զիմի Անթոնելլի (Մերսեդես) երրորդ տեղը ապահովեց՝ եզրափակելով եռեակը: Ծիսարարներու դասաւորման մէջ «Մերսեդես»-ը նշանակալի առաւելութիւն ստացաւ՝ կէտերու տարբերութեամբ հեռանալով միւս խումբերէն:

Կարողներու դասաւորում.
Զիմի Անթոնելլի (Մերսեդես) - 171 կէտ
ճորճ Ռասել (Մերսեդես) - 131 կէտ
Լուիս Համիլթըն (Ֆերարի) - 125 կէտ

Իսկ ինքնաշարժերու դասաւորում.
Մերսեդես - 302 կէտ
Ֆերարի - 204 կէտ
Մաքլարեն - 159 կէտ
Ռետ Պուլ - 115 կէտ

**Հ.Կ.Բ.Մ. ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ
ԸՆԿ. ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ**

Դարմանատեղ բաց է ամէն օր ստատոսան ժամը 9:00-էն մինչև կէսօր ժամը 3:00
Բացի Կիսօրի օրէն:

Ձեր ուշադրութեան կը սանձենք նաեւ թէ զեղարար բաց է նաև նոյն ժամերուն:

- Երկուշաբթի**
 - Բժշ. Յակոբ Գլընճեան - Ատամնաբոյժ
 - Բժշ. Անի Երկանեան - Մանկաբոյժ
- Երեքշաբթի**
 - Բժշ. Քրիս Կարպէտեան - Ատամնաբոյժ
 - Բժշ. Ռաֆֆի Փոլատեան - Գեղձային հիւանդութիւններ
 - Բժշ. Արթուր Չիլիպ - Ակնաբոյժ
 - Կարօ Ասեան - Ֆիզիքական բուժում
 - Բժշ. Մարալ Պոլեանեան - Հոգեբան
- Չորեքշաբթի**
 - Բժշ. Յարութ Տէմիրճեան - Ուկրաբոյժ
 - Բժշ. Յակոբ Գլընճեան - Ատամնաբոյժ
 - Մարիլին Առն - Սննդաբան
- Հինգշաբթի**
 - Բժշ. Քրիս Կարպէտեան - Ատամնաբոյժ
 - Կարօ Ասեան - Ֆիզիքական բուժում
 - Բժշ. Իրինա Արքանեան - Ծննդաբերութեան եւ կանանց հիւանդութիւններ
 - Բժշ. Միսակ Արքանեան - Վիրաբոյժ
 - Բժշ. Մարալ Պոլեանեան - Հոգեբան
- Ուրբաթ**
 - Բժշ. Յակոբ Գլընճեան - Ատամնաբոյժ
 - Բժշ. Անի Երկանեան - Մանկաբոյժ
 - Բժշ. Միսակ Արքանեան - Սրտաբան
- Շաբաթ**
 - Բժշ. Միքեալ Խօսէլյար - Քիր, կոկորդ, ակնայ
 - Բժշ. Էլի-Թոնի Բորպանի - Ընդհանուր բժշկութիւն
 - Բժշ. Քրիս Կարպէտեան - Ատամնաբոյժ
 - Բժշ. Յակոբ Գլընճեան - Ատամնաբոյժ

@aebu.org @aebumedicosocialcenter 01 560 704 / 71 356 035

Այս դժուար պահերուն, մեր Դարմանատունը կը շարունակէ կարիքաւորին կողքին կանգնի: Այսօր մենք ձեր աջակցութեան պէտք ունինք՝ մեր առաքելութիւնը շարունակելու համար:

Կրնաք նուիրատուութիւն կատարել Whish հաշիւով եւ օգնել մեզի որակաւի շարունակելու ինչպէս եւ անհրաժեշտ ծառայութիւնները մատուցելու մեր գաղութին:

Իրաքանցիկը ներդրում, ինչքան ալ փոքր ըլլայ, նպատակին կը ծառայէ:

Միասին կրնանք յոյսը վառ պահել:

Whish MONEY 71/356035

Շնորհակալութիւն Ձեր ազ օտոբեան եւ օժանդակութեան համար:
Միասին անկի գորարար եմք:

ARARAD DAILY NEWSPAPER

Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: araradoratert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمينية
تصدره شركه مسيسر للمطباعة والنشر (ش.م.م.)

www.araraddaily.com